

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ ԲՈՒՋԻ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄԻԱՑԵ

Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ով չի ոժանդակված ամբողջ եյու-
րյամբ ու նվիրվածությամբ կ. ԲԱԼՆԱԿԻՆ,
չի ոժանդակում ամբողջ ուժով նրա
կարգ ու կանոնիթ յեվ դիսցիպլինային,
նաև մատնիչ, նաև դավանան ե: (Ընդին)



ԶՈՐԱԿՈՉԻԿ

ԻՄԱՑԻՐ ՔԻ

ԱՐՏՈՆՈՒ

ԹՅՈՒԽՆԵՐԸ



ՃՐԱՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵՆԿՈՒՄՔԱՂԿՈՄԻ

8 ԵՎ.

ՔԱՂԻՈՐԾՐԴԻ

355.9

1931 թվին ԽՍՀՄ-ի Կենտգործկոմը «Պարագաղիք Զինվորական Ծառայության որենքի» 98-րդ հոդվածը փոփոխության յենթարկեց: Յերեւան կարգի արտօնությունների փոփարեն սահմանվեց մեկ կարգի արտօնություն:

Եշելով, վոր արտօնություն ստանում են այն զորակոչիկները, վորոնք հանդիսանում են ընտանիքի միակ աշխատանակ անդամը ու կերակրողը: Այսինքն, յերբ զորակոչիկի աշխատանքով ապրում աշխատանքի անընդունող մեկ և ավելի ընտանիքի անդամներ:

Արտօնությունների վերաբերյալ կատարված փոփոխությունները հիմնականում բղխում են մեր ժողովի պացիվիստական շինարարության ասպարիջում ձեռք բերված հսկայական նվաճումներից Առիթսկների կազմակերպչական-առնելու ամրացումից և բանվորական ու աշխատավորական լայն մասսաների դրության բարելավումից:

Կարմիր բանակ յեկող յերիտասարդությունը ար այլև չունի նախին հոգու, մտածելու ընտանիքի մասին և նկատի տոնվեցին այն հանգաւմանքները վոր զորակոչելիքներից շատերն իրենք հրաժարվում են իրենց արտանություններից և ցանկանում են լինել Կ.բանակի շարքերում:

Կարմիր բանակի հաջող համալրումը կախված է նրանից, թե վոր չափով զինվորական հաշվառման բաժինների հետ միասին տեղական կուսակցական, կոմյերիտական բջիջները, հաստրական կազմակերպությունները, զյուղխորհուրդներները և իրենք զորակոչելիքները մտահոգված կլինեն ու ակտիվ կերպով կմասնակցեն արտանությունների ձեվակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքմանը և հնարավոր պայմաններ կստեղծն ժամանակին ավարտելու այդ պատասխանառու աշխատանքը:

Զորակոչելիքներին և նրանց ընտանիքներին արփող բոլոր արտօնությունները պետք ե անպայման զորակոչելիքն, բանվորին, կոլխոզնիկին և աշխատավոր գյուղացուն համանեն:

Բոլորը պետք ե գիտենան այդ արտօնությունների մասին, զորպեսզի արտօնությունների ձեշտ ձեվակերպման հետ միասին ավելի շեշտակի ու ժամանակին կարողանանք հականար-

ված տալ դաշնակի, կուլակի բոլոր պրովակացիներին, ջախջախելով նրանց բոլոր փորձերը կարմիր բանակի շարքերը ներս սովորելու համար:

ՈՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՍՆԵՐ

«Պատաղիր Զինվորական ծառայության որենքի» համաձայն ընտանիքի անդամներ են համարվում նրանք, զորոնք ապրում են մի աղնատեսության մեջ: Որինակ, 4 յեղբայրներ կամ հորյեղբայրներ, աշխատում են տարբեր տեղերում, սակայն ապրում են մի անտեսության մեջ՝ նրանք համարվում են մի ընտանիք – մի ծուխ:

Պատահում են զեղքեր, յերբ զինակոչչիկի ընտանիքի հաշվեառման ժամանակ ցույց չի տըրվում նրա կազմի մեջ հորյեղբայրը, նրա կինը, զորդիները և այլն չնայած նրանք ապրում են միատեղ, զա սիալ ե, պետք ե անպայման այդպիսիները արձանագրվին նրա (զորակոչելիք) զորակոչելիքն քարտում, փորպես տվյալ ընտանիքի անդամներ:

Յերբ ընտանիքի անդամներից մեկը գնում



և սեպոնային, մշտական աշխատանքի, կամ սովորում և վորեկե գործոցում և որենքով չի ձեվակերպված Նրա բաժանքը և կապված ե տվյալ տնտեսության հետ նա նույնպես հաշվի յե առնվում արտոնությունների ձեվակերպման ժամանակ, վորպես ընտանիքի անբաժանելի անդամներից մեկը:

Յերբ զորակոչիկը ամուսնանում և և ապրում ե իր կնոջ ընտանիքում (տնիեսա) գուրս գալով նախկին ընտանիքի կազմից արտոնության հարցը ձեվակերպելու ժամանակ նկատի յե առնվում կնոջ ընտանիքի կազմը:

ԱՎՀԵԲ ԶԵՆ ՀՅՄԱՐՎՈՒԹԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴԱՐՆԵՐ

Զորակոչիկին արտոնություններ տալու ժամանակ, յեթե նրա ընտանիքից կա մեկը, վորը ծառայում ե բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի կազրային մասերում կամ սովորում և ուղմական գպրոցներում, այդ գեղագում տվյալ անձնավորությունները չեն հաշվվում ընտանիքի անդամներ և արտոնությունների ձեվակերպման ժամանակ նկատի չեն առնվում:

Ընտանիքի անդամներ չեն համարվում նպաւուիլ:

4

ա) Ընտանիքի այն անդամները, վորոնք իրենց անաշխատունակ լինելու պատճառով աղբում են Պետապահովագրական միջոցներով յեկ գինակոչիկի խնամքի տակ չեն:

բ) Ընտանիքի այն անդամները, վորոնք դատական մարմինների կողմից դատապարտվում են ու ազատազրկման ժամկետը լրանում և տըվյալ զինակոչից յերկու տարի հետո:

ԱՎՀԵԲ ԶԵՆ ԿԱՐՈՂ ՈՒՑՎԵԼ ԸՐՑՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Արտոնությունների ձեվակերպման ժամանակ առանց նկատի ունենալու ընտանեկան-տընտեսական դրությունը Խորհրդային իշխանության կողմից արված արտոնություններից չեն կարող ոգտվել:

ա) Զայնազուրկ զորակոչիկները.

բ) Խնչուս և այն զորակոչիկները, վորոնք խուսափել են կամ կփորձեն խուսափել զինվորական ծառայությունից:

ՈՒՃԵՄՔՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԲԱԺԱՆՎԵՐԻ

Արտոնությունների ձեվակերպման ժամանակ նկատի յե առնվում զորակոչիկի կամ նրա

5

ընտանիքի հայտարարությունը և դիմումը այն
մասին, վոր նա բաժանված ե յեղբորից, հորյեղ-
բորից կամ ծնողներից և յեթե նա ապացուցված
ե համապատասխան փաստաթղթերով:

Պատահել են դեպքեր (ինչպես և կեղծ բա-
ժանքներ), յերբ զինակոչիլը զորակոչի յեն-
թարկվելուց յերկու ամիս առաջ բաժանվելով իր
ընտանիքից ներկայացնում ե փաստաթղթեր այդ
մասին. Ժամանակի տեսակետից այդպիսի փաս-
տաթղթերը չեն ընդունվում և որինական չեն
համարվում. Որինական ե համարվում այն բա-
ժանքը, վորն առնվազն մեկ տարուց առաջ և
կատարվել Բաժանքը պաշտոնապես չձեգակեր-
պված լինելու դեպքում անորինական ե համար-
վում և թողնվում ե անհետեվանք:

Դյուզիմորհուրդները և դորակոչիները պետք
ե ժամանակին կարողանան ձեգակերպել հարցը,
զորակոչի ժամանակ առանձին զժգարություն-
ներ չստեղծելու համար:

Ա.Վ.Ք.Ա.Ր.Վ.ՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՀԵ-
ՐՈՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՍՏԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՀԵ-

Քորակոչին արանություն տալու համար
վճռական նշանակություն ունի նրա ընտանիքի
անդամների փաստական դրությունը (հասկել,

հիմություն, հաշմանդամություն) նրանց աշխա-
տունակությունը պարզելու համար:

«Պարտադիր Զինվորական Ծառայության
որենքի» աբոնություններ տալու ժամանակ
աշխատանքի անընդունակ են համարվում ըն-
տանիքի բոլոր այն անդամները, վորոնք՝

ա) Արական սեռի—18 տարեկանից ցածր
են և 55 տարեկանից բարձր:

բ) Իդական սեռի—18 տարեկանից ցածր
են և 50 տարեկանից բարձր:

գ) Հղի կանայք, վորոնք ունեն համապա-
տասխան վկայական պիտական ծառայության
մեջ յեղած բժշկից:

դ) Այն կանայք, վորոնք ունեն կամ խնա-
մում են մինչև 8 տարեկան հասակը չլրացած յե-
րեխաներ:

յե) Այն հաշմանդամները, վորոնք կորցրել
են աշխատունակության 50 տոկոսից ավելին և
պատկանում են հաշմանդամների 1-ին և 2-րդ
խմբերին:

Հաճախ դեպքեր են պատահում, վոր զորա-
կոչիները ներկայացնում են վկայականներ վոչ
լոիվ տեղեկություններով կամ պատճառաբանե-
լով, վոր ծանոթ չի արտոնության ձեգակերպ-
ման զործին, այդ իսկ պատճառով փաստաթղթ-

թերի ներկայացներու մեջ սկստվում և անտարբեր վերաբերմունքի հետ միասին ձգձգումներ ստեղծելով աճապին դժվարություններ:

Արտոնությունները վորոշում են անպայման զորակոչիկի կողմից ներկայացված ընտանիքի անդամների կազմի և նրանց տարիքների (Զագսի և բժշկական հանձնաժողովի վկայականներով) վերաբերյալ փաստաթղթերով:

Արտոնությունները վորոշում են շրջգործականներին կից զորակոչային հանձնաժողովի վերջնական վարոշումից հետո ցուցակներն ուղարկվում են Շրջգործականներին կոմիտարիատին կից զորակոչային հանձնաժողովի վերջնական վարոշումից հետո ցուցակներն ուղարկվում են Շրջգործականներին կոմիտարիատին տեղյակ դարձնելու Զորակոչիկը յեթե գտնում է, վոր այս կամ այն պատճառով արտօնությունը վորոշվել և սխալ և կարիք կա մտցնելու վորոշ փոփոխություն ընտանիքի կազմի ու նրանց ծննդյան թվերի մեջ, առանց ժամանակ կորցնելու մինչև զորակոչ որը (սեպտեմբերի 1-ից մինչև 15-ը) ներկայացնում ե դիմում համապատասխան փաստաթղթերով, շրջաններում — Շրջգործականներին, քաղաքում Քաղաքորհրդին կից զինվորական սեղանին: Ընտանիքի անդամների տարիքի վկայականները պետք ե լինեն Զագսից կամ բժշկական հանձնա-

ժողովից, առանց վերոհիշյալ վաստակվածի գյուղինորհրդների կողմից տրված վկայականները, վորոնք չեն ըղխում Զագսի ավյալներից, չեն ցնդունված:

Զորակոչիկը պետք ե իմանա, վոր առանց փաստական տվյալների իր ներկայացրած դիմումը կմնա անհետեվանք:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՏԻ ՑԵՍՏԵՐԸ ԱՐՏՈՒՐՈՒՆՆԵՐԸ

ա) Յեթե զորակոչիկի ընտանիքում կան աշխատանքի ընդունակ յերկու կին, նրանցից մեկը համարվում ե աշխատանքի անընդունակ: Այդ կատարվում ե այն գեպքում, յերբ զորակոչիկի ընտանիքում բացի իրենից ուրիշ աշխատող տղամարդ չկա:

բ) Պատահում են գեպքեր, յերբ մի ընտանիքից միևնույն հերթական զորակոչի տարում կանչվում են յերկու հոգի, այդպիսի գեպքում նրանցից մեկը չի կանչվում և արտոնության հարցը ձեվակերպվում ե ընդհանուր կարգով: Ցեստը և ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԵՑՈՂԸ Կ. ԲԱՆԱԿԻ ՇԱՄԲԹԵՐԸ ԿԱՆՉՎՈՒՄ

«Պարտադիր Զինվորական Շառայության որենքին համաձայն արտօնություններ ունեցող-

ներն ազատվում են բանակի կադրային մասեւ քում իսկական ծառայություն կրելուց և ծառայությունն անցնում են՝

ա) Յերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ 5 տարվա ընթացքում ծառայելով 8 ամիս:

բ) Կամ արտազորային կարգով չկտըելով իրեն արտադրությունից ու աշխատանքից:

գ) Արտօնություն ունեցողները կարող են նշանակվել կադրային զորամասերի կազմի մեջ միայն այն դեպքում, յերբ պահանջի վերակարգը չի լրացված արտօնություն չունեցողներով:

ԶՈՐԱԿՄՉԻԿԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Զորակոչային հանձնաժողովի բոլոր սիալ գործողությունների մասին զորակոչիկը կարող է գանգատվել հանրապետական զորակոչային հանձնաժողովին:

Դանգատները շուտափույթ կերպով քննելու համար հարկավոր ե դիմումները տալ այն զինակոչային հանձնաժողովի միջոցով, վորի զորադողությունների դեմ արվում ե գանդատ:

Արտօնությունների մասին զինակոչիկներին հայտնելուց հետո, յեթե նրա ընտանիքում մինչև բանակի շարքերը գնալը կատարվում է

փոփոխություն (մահ, ծնունդ, ամուսնություն, բաժանություն, հաշմանդամություն և այլն) զորակոչիկն և կյուղխորհուրդը պարտավոր են այդ մասին անմիջապես հայտնել Շրջգործկոմներին կամ Ռազմական կոմիսարիատին նոր փոփոխություններ մտցնելու համար:

Բացի ընտանեկան և տնտեսական պայմաններից բղիսոյ արտօնություններից զորակոչիկի ընտանիքը ստանում է նաև մի շարք այլ արտօնություններ, վորը նախատեսնված և ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմիորհի 1930 թ. ապրիլի 33-ի № 252 և 253 վորոշումների մեջ, վորոնք վերաբերվում են գյուղատնտեսական միասնական հարկին, աշխատանքի և սոցիալական առանձագագրությանը, փոստային, դրամական նըպատճերին, բնակարանային, կրթության, առողջապահության և այլ ասպարեզներին վերաբերվող խնդիրներին:

Ցուրաքանչյուր զորակոչիկ պետք ե տեղակ լինի այդ արտօնություններին և հետեւի, վորապես անշեղորեն այն կիրառվի կյանքում: Այստեղ կանգ կառնենք այն խնդիրների ու արտօնությունների հարցերի վրա, վորը անմիջապես վերաբերվում է զորակոչիկներին, զորակոչի ժամանակ այդ արտօնությունները հետեյալն են.

Ի՞նչ ԱՐՏԱՆԵԼԻԹՅՈՒՆՆԵՐ ԵԵ ՍՏԱՆՈՒՄ ԶԱ-
ՐԱԿՈՉԻ ՑԵՆՔԱԿԱ ԲԱՆՎՈՐ, ԲԱՏՐԱԿ, ԾԱՌԱ-
ՑՈՂ ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԸ:

1) Բանվորներն ու ծառայողները, վորոնք
հերթական դորակոչի ժամանակ զորակոչային
հանձնաժողովին ներկայանում են իրենց բնա-
կալիուրում վարձողի կողմից ազատվում են աշ-
խատանքից և պահպանվում ե այդ ժամանակվա-
միջոցում նրանց տեղի և միջին աշխատավարձը:

2) Ցերք զորակոչային հանձնաժողովի կող-
մից զորակոչիին ճիշճանդության պատճառով ու-
ղարկում են հիվանդանոց այդ վորձաշընում
վարձողը պարտավոր ե նույնպես պահպանել նը-
րա պաշտոնը և միջին աշխատավարձը:

3) Հերթական զորակոչի յենթակա բան-
վոր-ծառայողներին հաստիկների կրծատման
պատճառով կրծատել չի թույլատրվում, սկսած
սուստոսի եւից մինչև զորակոչային հանձնաժողո-
վին ներկայանալու որը (այս արտօնություննե-
րը չեն տարածվում նրանց վրա ովքեր տվյալ
ծեսնաբիություններում աշխատել են 6 ամսից
պակաս):

4) Սեպոնային, շինարարության վրա աշ-
խատող բանվորների, ծառայողների, ինչպես յեղ-

բանվորակների (նույնը և կամովորների ու Առզու-
դպրոց ընդունվողների նկատմամբ) միջին աշխա-
տովարձը չի պահպանվում, յեթե նրանք աշխատ-
ել են 6 բանվորական որից վոչ, ավելի:

5) Զորակոչային հանձնաժողովի կողմից
յերք զորակոչիկը նշանակվում է Բ. Գ. Կարմիրա-
կակի շարքերը մշտական ծառայության վարձողը
պարտավոր ե.

ա) Զորակոչիկի հայտարարությամբ ազա-
տել նրան աշխատանքից (վորովհետև զինվորա-
կան ծառայության ընդունվելու որից մինչև հա-
վաքակայան ներկայանալը անցնում ե վորոշ
ժամանակ, յերք զինակոչիկը կարող ե շարունա-
կել աշխատանքը) տալով նրան միջին աշխատա-
վարձի չափով 12 բանվորական որվա միանվագ
նպաստ:

բ) Նպաստ ստանալու ժամանակ զորակոչի-
կը ստանում ե վարձողից նաև այն որերի աշ-
խատավարձի միջին չափը յերք նա ներկայացել
ե զինակոչային հանձնաժողովին կամ նրա կող-
մից գտնվել և հիվանդանոցում (որինակ, յեթե
զորակոչիկը զորակոչային հանձնաժողովին ներ-
կայանալու համար բացակայել՝ ե 2 կամ 8 բան-
վորական որ և յեթե նրան արդեն նշանակել են
կարմիր բանակի շարքերը, արված նպաստի մեջ

հաշվում են նաև այդ յերկու յերեք որդու աշխատավարձը):

գ) Այն զեպքում, յերբ զորակոչիլը նշանակում է Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի շաբթերը, յերկրային զորամասերի փոփոխական կազմում կամ արտագորային կարգով ուսուցման, որդում և տարեկետում կամ այլ պատճառներով ազատվութեան զինվորական ծառայությունից նա անմիջապես վերաբառնում է իր նախկին աշխատանքին և չի ստանում վոչ մի նպաստ բացի Զին հանձնաժողովին ներկայանալու որերի միջին աշխատավարձից:

դ) Մինչև զորակոչիլի զորակոչային հանձնողով ներկայանալը նախորոք նրան վորեվե նպաստ չի տրվում:

Սեղոնային շինարարության և ժամանակավոր բանվորա-ծառայություններին ինչպես և բառակեների նպաստների ինդիբը դրվում է հետեւյալ կերպ.

ա) Յեթե նրանք աշխատել են 6 բանվորական որից վոչ ավելի, միանվագ նպաստ չի տըրվում,

բ) 6 բանվորական որից ավելի մինչև մի ամիս աշխատողները իրավունք ունեն ստանալու 3 բանվորական որդու միջին աշխատավարձը.

գ) Մեկ ամսից ավել մինչև վեց ամիս աշխատողները ստանում են վեց բանվորական որդու միջին աշխատավարձը.

դ) Իսկ վեց ամսից ավել աշխատողները ստանում են լրիվ միանվագ նպաստ 12 բանվորական որդու աշխատավարձի չափով.

6) Յեթե Զորակոչային հանձնաժողովը զորակոչիլի բնակավայրից (50 կիլոմետր յերկտիւղուղու ճանապարհով) և 20 կիլոմետր այլ ճանապարհներով) հեռու յե գտնվում, այն ժամանակ գորակոչիլն ստանում է այն արտօնությունները, ինչպիսի արտօնությունն արվում է տեղում զորակոչի յենթարկվողին:

իսկ յեթե Զորակոչային հանձնաժողովը զունվում է ավելի (50 կիլոմետր յերկաթուղու ճանապարհով) և 20 կիլ. այլ ճանապարհով) հեռավորության վրա, այն ժամանակ կիրառվում է հետեւյալ կարգը.

ա) Զորակոչային հանձնաժողովին ներկայանալուց առաջ վարձողը ազատում է նրան վը ճարելով 12 բանվորական որդու միջին աշխատավարձի չափով նպաստ:

բ) Յեթե Զորակոչային հանձնաժողովը զորակաչիլին չի նշանակում Կարմիր բանակի շաբթերը ծառայության, նա իրավունք ունի Զինագերը ծառայության, նա իրավունք ունի Զինա-

կոչային հանձնաժողովից համապատասխան փառատաթուղթ ստանալու որվանից սկսած Յ օրվա ընթացքում վերադառնալ իր նախկին պաշտոնին չհաջիլով ճանապարհու:

Դ) Կարձու պարտավոր և գորակոչեկի փոխարքն, նրա վերադարձից հետո, ընդունված նոր աշխատակցին ազատել աշխատանքից, զգուշացնելով նրան այդ մասին մի որ առաջ կամ վճարել մի որվա միջին աշխատավարձը:

Ե) Զորակոչեկը կարմիր բանակում Յ ամիս մնալուց հետո ծառայությունից ազատելու գեպքում իրավունք ունի աշխատանքի անցնել իր նախկին աշխատավայրում:

ԶՈՐԱԿՈՉԻԿՆ ԻՆՉ ԶԱՓՈՎ ԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ՓՈԽ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՊԻԾԻ ՍՏԱՆԱ.

Գոյություն ունեցող որենքների համաձայն աշխատավոր, յեթե հետանում և աշխատանքից և նա ավյալ ձեռնարկության մեջ 11 ամիս լրիվ չի աշխատել արձակութեղի փոխհատուցում չի ստանում: Սակայն զորակոչեկների նկատմամբ այդ որենքը կիրառվում է հետեւյալ կերպ:

Ա) Յեթե զորակոչեկը աշխատել է 5 և կես ամիս ավյալ բանվորական տարում նույն ձեռնարկության մեջ, իրավունք ունի ստանալու մի

սարվա համար սահմանված լրիվ արձակուրդի գոխնատուցումը:


Ի՞ՆՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ Ե ՏՐՎՈՒՄ ԶՈՐԱԿՈՉԻԿՆ ԻՒՆ ՍՈՑ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՇՐՎ.

Զորակոչեկին կարմիր բանակի շարքերը նշանակելուց մի ամիս հետո, յեթե նրա կենը յերեխա յե ծնում իրավունք ունի Սոցապ գանձարկից ստանալու միանվագ նպաստ ոժիքի համար և յերեխային կերակրելու համար Յ ամիս շարունակ, հաշված յերեխան ծնվելու որից: Մեկ ամսվա ժամկետը հաշվվում ե բոլոր զեղքերում այն որից, յերբ զորակոչեկին վերջին անդամ վը ճարված ե աշխատավարձը և միանվագ նորաստը:

Այս արտոնությունները տարածվում են նաև նրանց վրա, ովքեր կամավոր կերպով մըսնում են կարմիր բանակի շարքերը (վորոնց թը վում նաև Բազմական ապրոցներ գնացողները):

Բ) Բնտանիքում առնվան զեղքի ժամանակ ստանում և թարման ծննդու:

Գ) Կարմիր բանակի շարքերը կանչված բանվորի կամ առաջակա ընտանիքում, յեթե չը կան մշտական աշխատավայրի, արդյունաբերության մեջ գրա և առավելանը ունեն կադրերի բանվոր միջնորդ և առաջնորդ աշխատավայրուն աշխատանքի գնալ առաջին հերթին:



Ե՞՞Չ ԱԳՆՈՒԹՅՈՒՆ և ՑՈՒՅՑ ՏՐՎԱԻՄ ԿՈԼ-
ԽՈՉՆԻԿ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Անգրկոյիսոց կենարոնի 1931 թ. № 39 վո-
րոշման համաձայն կոլխոզնիկը զորակութիւնը բա-
նակում մշտական ծառայության մտնելուց հետո
սահմանում է հետևյալ արտանությունները:

1) Յերբ կոլխոզնիկը գաճախում է Կարմիր
բանակի կազրային զորամասերում անընդհատ
ծառայության մեջ, կամ կանչվել է Ռազմական
ուսուցման յերկրային զորամասերի փոխուական
կազմի մեջ, ծառայության ամբողջ ընթացքում
ինչպես նաև ամեն անսակ ուսումնական հավաքնե-
րի ժամանակ կոլխոզները պարտագոր են զինվո-
րականի ընտանիքներին ցուց տալու հետևյալ
սղնությունը՝

ա) Կոլխոզի ուժով մշակել է հավաքել զին-
զորական կոլխոզնիկների անձնական հողերը.

բ) Փոխադրել վասելափայտ, վերանորոգել
բնակաբաննը, ձի տալ անձնական կարիքների հա-
մար և այլն:

2) Զինվորական-կոլխոզնիկի զավակները,
յեթե կոլխոզում կան մանկամուրներ, մանկա-
կան հրապարակներ ու մանկապարտեղներ ըն-
դունվում են առաջին հերթին:

3) Կոլխոզնիկ բանակայինի ընտանիքների

անգամներին կոլխոզների վարչություններն առ-
ուաջին հերթին ուղարկում են դաշնագան դատին-
թագքնել:

4) Զինվորականների սաղմական հավաքնե-
ների ժամանակ կոլխոզների վարչությունները
զինվորական-կոլխոզնիկի ընտանիքի անգամնե-
րին աշխատանքի վերակարգ են տալիս առաջին
հերթին:

5) Զորակոչիկի ընտանիքի աշխատունակ
անգամներն աշխատանք են ստանում առաջին
հերթեն, տալով նրանց ավելի քանակով աշխա-
տանքային որեր այն չափով, վոր ապահովեն
զորակոչիկ կոլխոզնիկի ընտանիքը, նրա միջին
աշխատավարձի պահպանման միջոցով:

6) Այն դեպքում, յերբ զինվորականի ըն-
տանիքի աշխատունակ անգամները բարեխիղճ
աշխատանքի պայմաններում չեն կարողանում
հասցնել այնքան աշխատեր, վոր ապահովեն այդ
ընտանիքը, կոլխոզների վարչությունները պար-
ապահու են:

ա) Ապահովել մթերքներով ու կերի միջու-
ցով նույն քանակով, ինչ քանակով, ստանում են
կոլխոզում բարեխիղճ աշխատող կոլխոզնիկները և
նույն գներով տալով վճարի համար ժամկետներ:

բ) Ծնտանիքի աշխատունակ անգամները

անկախ սոցիալական ապահովագրության մարմինների կողմից ցույց տրված ռդնությունից սկսած և ոգտվեն նպաստով անաշխատունակների ոգնության ֆոնդից առաջին հերթին:

8) Յեթե կոլխոզներկ գորակոչիկի ընտանիքում չկան աշխատունակ անդամներ, անկախ սոցալական առվաճովագրական մարմինների կողմից տրացած ոգնությունից պետք է ստանան նպաստ այն չափով և կարգով, ինչպես այն կոլխոզները, վարը կորցրել և յուր աշխատունակությունը կոլխոզում:

9) Բանակի շարքերը կանչված կոլխոզներկներին կոլխոզների վարչությունները պարտավոր են տալ միանալու նպաստ այն չափով, ինչ չափով վորոշել և ընդհանուր ժողովը, բայց այդ նպաստը չպետք է 25 ռ. պակաս լինի: Հիշյալ գումարը զինակոչիկին արվում և այն մոմենտին, յերբ նա ուղեմորվում է զորամաս:

10) Յերբ կոլխոզները ուսուցան և կանչվում վօրպես փոփոխիկ կամ մի ամսություն տեսվողությամբ հավաքներին, կոլխոզի վարչությունը պարտավոր է տալ նրան միանալու նպաստ այն չափով ինչ չափով, վոր վորոշել և ընդհանուր ժողովը, բայց այդ նպաստը պետք է 10 ռ. պակաս լինի.

11) Յերբ կոլխոզները, վորը բարեխպօրհն աշխատել և կոլխոզում կանչվում է յերկրային գորամաները ուսուցման ուսուցման, նրա ընտանիքներին կոլխոզն ոգնություն և ցույց տալու, ավելացնելով աշխատերն արտադրանքի կեսից մինչև յերեք քառորդի չափով իր նման հավասար վորակի բարեխմիջն աշխատող կոլխոզների արտադրանքի հաշվով:

12) Կոլխոզի վարչությունը պարտավոր է բանակի կամ ուսուցմական հավաքների կամչվող կոլխոզներին ձրի տալ փոխագրական միջոցներ, մինչև զորակոչիչն կայանը կամ հավաքակայանը:

Այս վորոշումն ուժի մեջ է մտել արդեն 1931 թ. հոկտեմբերի 1-ից:

ԲՎՔԵՐ ԻԲԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԱԳԱՀԱՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

ԽՍՀՄ կենտգործկոմի ու Փողկոմիորնի 1931 թ. ոգուստոսի 23-ի № 14—622 վորոշումով պետական ապահովության իրավունք ունեն աշխատանքի անընդունակ դավակները, յեղբայրները, քույրերը, ամուսիններն ու ծնողներն այն զինվորականների, վորոնք ժամկետավոր ծառայությունն անցկացնում են բանվորաշյուղացիա-

կան Կարմիր բանակի կազրային զորամասերում
և յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի մեջ,
համելյալ գեղքերում.

1) Յերբ բանվորագյուղացիական Կարմիր
բանակ և կանչվում ընտանիքի միակ աշխատու-
նակ անդամը և յերբ իր ընտանիքում կան մեկ
կամ ավելի աշխատանքի անընդունակ անդամ-
ներ, զորոնք զորակոչից առաջ զինվորականը
պահում եր իր աշխատանքով:

2) Յերբ բացի Կարմիր բանակ կանչվածից,
կա ընտանիքում մի այլ աշխատաւնակ անդամ,
և դորակոչից առաջ այդ յերկուսի աշխատանքով
պահում ելին ընտանիքի յերեք և ավելի աշխա-
տանքի անընդունակ անդամներ:

Բանակ կանչվածների ընտանիքների հետ
հավասար իրավունքներ են վայելում կամագոր
կերպով բանակ յեկածների ընտանիքները:

Ընտանիքի աշխատանքի անընդունակ ան-
դամ, վորոնք ապահովության իրավունք ունեն
համարվում են.—

ա) 18 տարեկանից յերիտասարդ անձինք.
բ) 55 տարեկանից բարձր տղամարդիկ և 50
տարեկանից բարձր կանայք.

գ) Առաջին յերեք խմբակի հաշմանդամները:
դ) Կանայք՝ ծննդաբերությունից առաջ
վերջին յերկու տմբիներում.

յե) Կանայք՝ վորոնք խնամում են մինչև 8
տարեկան հասակ ունեցող զավակներ կամ պին-
վորականի յերկայրներին ու քույրերին:

Յեթե զինվորականի ընտանիքում տեղի յեն
ունենում փոփոխություններ (հեռանում են աշ-
խատունակ անդամները, ավելանում են աշխա-
տանքի անընդունակները), այդ փոփոխություն-
ների հիման վրա ընտանիքն ապահովման նոր
իրավունք և ձեռք բերում:

Ապահովության իրավունք ունեցող անձանց
արվում և ամսական գրածական նպաստ, դրա
համար սահմանված նորմաներով:

* Զինվորականների ընտանիքները պահելու
ժամաները կատարվում են ի հաշիվ Միության
մեջ մտնելով հանրապետությունների պետական
բյուջեների:

Խայտական զորձագիր Կոմիտեները և Քաղ-
խորհուրդները կարող են վորոշել նպաստների
վճարն ավելացնել սահմանված նորմաներից:

Այդ գեղքում տարբերությունը արվում է
ի հաշիվ ակագան բյուջեի:

Զինվորականների ընտանիքների անդամնե-
րը նպաստ ստանում են այն որից, յերբ զինվո-
րականը ծառայության և կանչված կարմիր բա-
նակի կազրային մասերը և շարունակում են այդ

Նպաստն ստանալ մինչեւ բանակից ործակվելուց
յերկու ամիս տնօք:

Յերկրային զորամասերի փոխնիսիկ կազմի
գինվորականների ընտանիքների անդամները նշա-
ռաստ ստանում են ամբողջ այն ժամանակամիջու-
ցում, յերբ զինվորականն իր ծառայության առ-
ուաջին տարում ուսուցման մեջ և գանգում այդ
դրամամասերում:

Նպաստները նշանակում են սոցաֆի մար-
մինները ապահովության իրավունք ունեցող ան-
ձանց հաշվառման հիման վրա, առանց այդ ան-
ձանց կողմից դիմումներ տալու։ Հաշվառումը կա-
տարվում է տեղական զորակոչային հանձնաժո-
ղովների նյութերի հիման վրա։

Կարմիր բանակի շարքերից դասալիք զին-
վորականների ընտանիքները զրկվում են ապա-
հովություններց։

Այն անձինք, զորոնք ապահովության իրա-
վունք ունեն Սոցավի կարգով կամ հատուկ որե-
նքների հիմանքներով այս վորհումավ ապահո-
վում չեն ստանում։

ԶԱՆԳՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒ-
ԹՅԱՆ ՆՈՐՄԱՆՆԵՐԸ.

Մահմանված մի կարգի արտոնության հետ
միասին, զորի մասին ոսացինք, Միութենուկան

24

կառավորության վորոշման համաձայն, Անդրկո-
վկասյան Կենտրոնական Գործադիր կոմիտեն
1931 թ. ապրիլի 29-ին № 101 վորոշումով ստո-
մանել է դրամական նպաստ ստանալու ներքութե-
ցյալ նորմաները. Այն զինապարտ Կարմիր բանու-
կայինի ընտանիքների նկատմամբ, վորոնք ծա-
ռայում են կարմիր-բանակի կադրային զորամա-
սերում կամ կանչված են յերկրային զորամասե-
րի փոփոխիկ կազմի մեջ նորմաները գյուղի նկա-
տմամբ հետեւյաներն են։

Գյուղում. — ընտանիքի աշխատանքի անը-
սունակ մի անդամի համար 0 ռ., 2-րդ անդամի
համար 7 ռ., 3-րդ անդամի համար 6 ռուբի,
4-րդ և հաջորդ անդամների համար ծառական ուս-
րի։

Քաղաքներում. — աշխատանքի անընդունակ
անդամի համար 16 ռ. 2-րդ անդամի համար 13 ռ.,
3-րդ անդամի համար 11 ռ. 4-րդ և հաջորդ ան-
դամների համար 8-ական ուսրի։

Այս ավելի պարզելու հաժար բերենք հետեւյան
վյալ որինակը. յենթադրենք զինակոչիկ ԿիրԱ-
ԿՈՍՑԱՆ ՄԱԹԵՎԱՍԼ չի ստացել արտոնու-
թյուն քանի զոր նրա ընտանիքում կա մեկ աշ-
խատող և ուղարկվել է Բ.Գ.Կ.Բ. շարքերը, բայց
ընտանիքը բաղկացած է բացի իրենից 9 անձից

25

վարից 8-ն անաշխատանակ Ան, այդ 8 անաշ-
խատունակներից 2-ը հաշվի չեն առնվում, քանի
վոր նրա տանը կա աշխատանքի բնդունակ մի
հոգի և նու կարող է ինամել այդ շաբաթ: Մնաշած
աշխատանքի 6 անընդունակներին արվում է
վերոհիշյալ նորմաներով նպաստ նկատի ունենա-
լով այն, թե զրակոչիկ ԿիրԱԿՈՍՅԱՆՆ վարսեղ
և ապրում, գյուղում թե քաղաքում: Առանք, թե
նու ապրում ե քաղաքում, այդ գեղքում ԿիրԱ-
ԿՈՍՅԱՆՆ ընտանիքը կտանա 6 անաշխատու-
նակ անդամների համար 64 ո., իսկ յեթե ԿիրԱ-
ԿՈՍՅԱՆՆ ընտանիքը ապրում ե գյուղում, ստա-
նում և գյուղի համար ստհմանված նորմայով
այսինքն 37 սուրբի:

Կարմիր բանակայինի ընտանիքին նպաստ-
ներ արվում են ամեն ամիս:

Անկանոն և պակաս ստանալու գեղքում նոտ
պարտավոր և այդ մասին բողոքարկել Շրջանա-
յին Ռազմական Կոմիտարիատին տեղական մար-
միններին: (Եղջգործիոն, Բանգյուղունչություն,
գյուղիորհուրդ) հարցը պարզերու:

Անհրաժեշտ է, զրապիսդի յուրաքանչյուր
զորակոչիկ բանվոր, կոլխոզնիկ, աշխատավոր մա-
ստանեն լավ յուրացնեն այդ արտօնություն-
ները: Յուրաքանչյուր զորակոչիկ պիտի պայքա-

րի այդ արտօնությունների լրիվ կիրառման հա-
մար և պիտի պաշտպանի իր բոլոր իրավունք-
ները:

Աշխատեաչությունը, դասախազությունը պը-
րաֆիսիոնալ և հսուաբակալան կազմակերպու-
թյունները, ակումբները, խրճիթները հսկայական
անելիքներ ունեն այս բնադրովառում: Գյուղիոր
հուրգները և վարչական մարմինները առաջնոր-
դեաբ և լինեն հետեւյու և անշեղսրեն կյանքում
կիրառելու Խորհրդային կառավարության բոլոր
վորոշումները զորակոչիկներին տրվելիք արտօնու-
թյունների և իրավունքների մասին:

Այդ խնդիրների մասայականացումը սեր-
տորեն պիտի շաղկապվեն կուսակցության ու
Խորհրդային իշխանության վերջին ձեռնարկում-
ների պարզաբանման հետ, վորոնք խոշոր նշա-
նակություն ունեն հնդամյակը հաջողությամբ
յեղբափակելու գործում, կոլխոզների կազմակերպ-
յեղբափակելու գործում, կոլխոզների ամբողջման
շական սնակառական հիմքի ավելի ամբողջման
գործում:

«Վոչ մի զարակոչիկ բանվոր, կորանականական,
չըավոր միջակ գյուղացի տունց իրենց արտօ-
նություններն իմանալու» սու պիտի և լինի մեր
լոկունքը:

Անինաս ոլոյիքար պիտի և ծավալի հակա-
27

հեղափոխական դաշնակցության, կուլտակի և բուր
ը տեսակի հակախորհրդային թշնամի տարրերի
դեմ, վորոնք փորձում են վոչ միայն պրովակա-
ցիայի յենթարկեն այս տարրի զորակոչը, այ-
ն կաշատան Կարմիր բանակի համալրման ժա-
մանակ ներս սղոսիել Բանվորա-Դյուլացիական
Կարմիր բանակի շարքերը: «Վաշ մի գաշնակ, վոչ
մի տրոցկիստ, ծայնաբուրկ, սոցիալապես անհա-
րացատ ու քայբայլած տարր Կարմիր բանա-
կին»:

Ահա զարակոչի առաջին և հիմնական խնդիրը,
ահա մեր տեղական կազմակերպությունների
մարտական խնդիրը, վորն ամեն կերպ պիտք և
կիրառվի կյանքում:

Մերկացնել, պրոլետարիատի դիկտատուրա-
յի ամուր հենարան, ԽՍՀՄ-ի արթուն պահակ
Կարմիր բանակին անարժան, սոցիալապես ան-
հարազատ ու թշնամի տարրերին հենց իրենց
զորակոչիների հասարակական կազմակերպու-
թյունների միջոցով, ակտիվ կերպով ներգրավե-
լով նրանց զորակոչի աշխատանքներին, ահա
խնդիրը: Զորակոչիկը պիտք ե՞ պատրաստ լինի
տիրապետելու Կարմիր բանակի ռազմական բար-
ձրը տեխնիկային:

Նա պիտք լսով հիշի, վոր մարզը և տեխնի-

կան հետագա պատերազմերում կվորոշի ամեն
ինչ: Կարմիր բանակը իր գասակարգային բար-
ձը գիտակցությամբ, իր ինտերնացիոնալ վոզու-
ու գիտակցական պողպատյա կարգավահությամբ
հանդիսանում ե ամենաառաջին բանակը ամբողջ
աշխարհում:

Ըսկ, ՍՏԱԼԻՆԻ լրդում օ Բոլեվիկները պե-
տք ե տիրապետեն տեխնիկային հանդիսանում ե
յուրաքանչյ ւր զորակոչիկի համար մարտական
խնդիրը:
Զորակոչիկները պետք ե տիրապետեն տեխնիկա-
յին, իսկ այդ պահանջում ե ամենից առաջ
լինել գրագերատ:
Դրա համար անհրաժեշտ է վոաքի հանել բոլոր
կարող ուժերը ծավալել սոց մրցումն ու հարվա-
ծայնությունը զովակոչիկների միջից անզրագի-
տությունը վերացնելու համար:
Վոչ մի անզրագետ և կիսազրագետ Կարմիր բա-
նակին»:

Այսպեսով պիտք ե այսպիս անել, վոր մինչև
զորակոչը հող ստեղծել ուազմական տեխնիկային
տիրապետելու, առաջուց այդ տեխնիկային ծան-
ոթ լինելու հետ և մտնելով Կարմիր բանակի
տիրապերը արժանանալ Կարմիր բանակային պատ-
շարքերը արժանանալ Կարմիր բանակային պատ-
շարքը կոչման:
Ահա մեր զորակոչիկների տեղական որդանների
յերկրորդ հիմնուկան խնդիրը:

Տալ կարմիր բանակին քաղաքականապես կայուն,
կուլտուրապես տուաջադիմ, ֆիզիկապես տառջ,
սոցիալապես միանգամայն հարազատ ու ուղղա-
կանութիւն պատրաստի զորակոչիկ մարտիկներ,
ահա կուսակցության պահանջը, ահա մեր կաղ-
մակերպությունների հիմնական խողըները:

Կուլտակը, գանձակը ամեն կերպ կաշխատեն
սպասագործել իրենց պայքարի համար զորակոչին
նախապատրաստվելու մեր աշխատանքների այս
կամ այն ընապահառում թույլ տփած առանձին
սխալները, թէրությունները և այլն:

Կաղմակերպությունները պետք են լինեն զը-
դասա, պետք են ամենա մանրազնին կերպով
ընարկել լուծել զորակոչին վերաբերվող հարցե-
րը, պարզել յուրաքանչյուր զորակոչիկի զեմքը
սոց դրությունը կազմել նրանց ընութագրերը և
անխնա պայքար ծափակելով դասակարգային
թշնամի տարբերի դեմ, կործանիչ հարված հաս-
ցնել զորակոչի նախապատրաստումը ինքնահսկ
մասնող բոլոր գույնի և տեսակի ոպորտու-
նիստներին:

Յուրաքանչյուր զինակոչիկի և աշխատավոր
պետք և պարզ մինի, վար զորակոչիկին այլպիսի
լայն արտօնություններ կարող եր տալ միայն
Խորհրդային իշխանությունը: Յարիզմի, զաշնակ-

ների ափսարեառության ժամանակ հաշվի չեր
առնվազմ զորակոչիկի ընտանեքական պայմանները
և տնահասական գրությունը: Մեծ դժուռությամբ
եր այն ժամանակվա զորակոչիկը բանակ—կո-
ղարման գնում: Նրան այնակա սպասում եր մըս-
րակի սեփիմը: Շատերը կտըսում ելին իրենց մատ-
ներից մեկը, կամ վնասում մարմնի վորեն մասը
ցարական, զաշնակցական կազարմայից, մտրակի
ուժիմից խուսափելու համար:

Խորհրդային կարգերում նման և վոչ մի գե-
ուք չի արձանագրված, վորովնեակ կարմիր բան-
ակը—զա բանվորների և գյուղացիների սեփա-
կան բանակին և, վորն ամուր կերտով կապված և
սոցալիզմ կառուցող մասամբների հետ, վորք պա-
շտպանում և սոցալիստական շինարարությունը:

Բանվոր և գյուղացի յերևասարդության
բաւոն խանգամասությամբ կարմիր-բանակ զի-
մելլ ամենալավ նապատակն է դասակարգային թր-
շն սմուռն:

ԽՍՀՄ-ն իր սահմանների համեմատությամբ
փոքրաթիվ բանակ և պահում, վորովնեակ նա չի
հետապնդում իմպերիալիստական, նվաճողական
նովատակներ:

Սակայն մեր=բանակը այնքան ուժ ունի,
վոր կարող և պահնջված ըսպեցին յետ մղել ամեն
տեսակի ինտերվենցիա:

Հակախորհրդային պատերազմի գնալքում, վարչական ամբողջ ուժով պատրաստում և կապիտալիստական աշխարհը, մեր յերկրի բանվորները, կոլտնտեսականները և բարոր աշխատավորները մեկ մարդու նման վոտքի կյանեն և ուժ կտան բանակին:


Զորակոչիկներին տրվող արտոնությունների հիմքում դրված և մեր վարած խաղաղաբերական քաղաքականությունը, սոցիալիստական ամբողջ շինարարության շահերը:

Անա թե ինչու արտօնությունների ձևակերպման խնդիրը զորակոչի նախապատրաստման մյուս հիմնական խնդիրների հետ փասին տեխնիկական հասարակ գործ չի, պյու առզաքական կարելիոր աշխատանք, վորը մեր քուօր կազմակերպությունների ուշադրությունը կարողությունում պետք լինի:



1932 p. - 55(

ଫୁଲ୍‌ପାତ୍ର ଓ 20 ମୀଟର



କେନ୍ଦ୍ରୀୟ ପାତ୍ର ଏବଂ ପାତ୍ରାଳୋଦ୍ଧରଣ
ଅଧ୍ୟାତ୍ମିକ ପାତ୍ରାଳୋଦ୍ଧରଣ ଏବଂ ପାତ୍ରାଳୋଦ୍ଧରଣ

1932 p.